Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-158-07.02.2022,21.03.2022-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-212-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասից, 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից, 9-րդ հոդվածի 2-րդ մասից, 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերից, 12-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերից, 13-րդ հոդվածի 2-րդ մասից, 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերից հանել «կառավարման» բառերը:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում 2-րդ մասից հետո լրացնել նոր 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարն արդյունավետ կազմակերպելու համար՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունվում են եռամյա ազգային ծրագրեր և դրանց իրականացման ժամանակացույցեր, որոնք հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Եռամյա ազգային ծրագրերը և դրանց իրականացման ժամանակացույցերն առնվազն ներառում են միջոցառումը, դրա կատարողին կամ կատարողին և համակատարողներին, կատարման ժամկետը, ֆինանսավորման աղբյուրներն ու չափերը, ակնկալվող չափելի արդյունքները:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«1) **մարդկանց թրաֆիքինգը կամ շահագործումը՝** շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ բռնություն գործադրելով, կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, անձի պաշտոնից կամ ծառայողական դիրքից կամ լիազորություններից բխող ազդեցությունը կամ հանցագործությունից տուժած անձի անձնական կախվածությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ խոստանալու կամ առաջարկելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի կողմից նման համաձայնություն տալու համար նման օգուտ ստանալու կամ առաջարկն ընդունելու միջոցով: Սույն օրենքում որպես մարդկանց թրաֆիքինգ կամ շահագործում է սահմանված նաև շահագործման նպատակով երեխային կամ անօգնական վիճակում գտնվողին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը

կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը: Շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայություն մատուցելուն կամ հակահիրավական գործողություններ կատարելուն հարկադրելը, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, բջիջը, օրգանը, հյուսվածքը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելը.»,

2) 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին կետ՝

«1.1) **անօգնական վիճակում գտնվող**՝ անձ, որն իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը.»,

3) 5-րդ կետում «հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձ» բառերը փոխարինել «անօգնական վիճակում գտնվող» բառերով:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) վերնագրում «**սահմանափակումը**» բառից հետո լրացնել «**և լրագրողական մրցանակաբաշխություն հայտարարումը**» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ մաս՝

«2. Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարն արդյունավետ լուսաբանելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը յուրաքանչյուր տարի հայտարարում է լրագրողական մրցանակաբաշխություն: Ամենամյա լրագրողական մրցանակաբաշխության անցկացման կանոնակարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համատեղ հրամանով:»:

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մաս.

«5. Նույնացման հանձնաժողովի կողմից անձին որպես զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ նույնացնելու ցուցիչները հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

Հոդված 6. Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում «հոգեկան խանգարման առկայության» բառերը փոխարինել «անօգնական վիճակում գտնվելու» բառերով:

Հոդված 7. Օրենքի 22-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-2.3-րդ մասեր.

«2.1. Սույն օրենքով նախատեսված աջակցության տրամադրման կարգը և չափերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

2.2. Զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին կացարանի տրամադրման, բնաիրային, հոգեբանական, խորհրդատվական, իրավաբանական օգնության և խնամքի տրամադրման, այդ թվում՝ համապատասխան հաստատությունում, որակի նվազագույն չափորոշիչները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Սույն մասում նշված ծառայությունների որակի նվազագույն չափորոշիչները պարտադիր են զոհերին կամ հատուկ կատեգորիայի զոհերին

սոցիալական ծառայություններ մատուցող հիմնարկների և կազմակերպությունների համար՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից:

2.3. Սույն հոդվածի 2.1-ին և 2.2-րդ մասերում նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանվող կարգավորումները վերաբերելի և կիրառելի են նաև սույն օրենքի 21-րդ հոդվածում նախատեսված՝ նախանույնացման փուլում աջակցության կարիք ունեցող անձանց նկատմամբ:»,

2) 10-րդ մասի առաջին նախադասությունում «ծեր կամ հաշմանդամ» բառերը փոխարինել «տարեց կամ հաշմանդամություն ունեցող» բառերով, իսկ երրորդ նախադասությունում «ծեր, հաշմանդամ» բառերը փոխարինել «տարեց, հաշմանդամություն ունեցող» բառերով:

Հոդված 8. Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասում «Հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված» բառերը փոխարինել «Անօգնական վիճակում գտնվող» բառերով:

Հոդված 9.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ, 6-րդ և 8-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, իսկ Հայաստանի Հանրապետությունում 2023-2025 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը, ֆինանսավորման աղբյուրները ու չափերը, ակնկալվող չափելի արդյունքները՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-158-07.02.2022,21.03.2022-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մարդկանց թրաֆիքինգի ~~եւ~~և շահագործման ենթարկված անձանց նույնացման ~~եւ~~և աջակցության մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-212-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասից, 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից, 9-րդ հոդվածի 2-րդ մասից, 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերից, 12-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերից, 13-րդ հոդվածի 2-րդ մասից, 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերից հանել «կառավարման» բառերը:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում 2-րդ մասից հետո լրացնել նոր 3-րդ մաս՝ ~~հետեւյալ~~հետևյալ բովանդակությամբ.

«3. Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի ~~եւ~~և շահագործման դեմ պայքարն արդյունավետ կազմակերպելու համար՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունվում են եռամյա ազգային ծրագրեր~~՝ դրան իրականացման ժամանակացույցերի,~~ և դրանց իրականացման ~~ժամանակացույցերի, ֆինանսավորման աղբյուրների ու չափերի, ակնկալվող արդյունքների սահմանմամբ~~ժամանակացույցեր, որոնք հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Եռամյա ազգային ծրագրերը և դրանց իրականացման ժամանակացույցերն առնվազն ներառում են միջոցառումը, դրա կատարողին կամ կատարողին և համակատարողներին, կատարման ժամկետը, ֆինանսավորման աղբյուրներն ու չափերը, ակնկալվող չափելի արդյունքները:»:

Հոդված ~~2~~3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում՝

2) ~~1)~~ 1-ին կետը շարադրել ~~հետեւյալ~~հետևյալ նոր խմբագրությամբ՝

«1) **մարդկանց թրաֆիքինգը կամ շահագործումը**՝՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես ~~նաեւ~~նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ բռնություն գործադրելով, կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ~~ձեւերով, առեւանգման~~ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, անձի պաշտոնից կամ ծառայողական դիրքից կամ լիազորություններից բխող ազդեցությունը կամ հանցագործությունից տուժած անձի անձնական կախվածությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ

տալու կամ խոստանալու կամ առաջարկելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի կողմից նման համաձայնություն տալու համար նման օգուտ ստանալու կամ առաջարկն ընդունելու միջոցով: Սույն օրենքում որպես մարդկանց թրաֆիքինգ կամ շահագործում է սահմանված ~~նպատ~~նպատակ շահագործման նպատակով երեխային կամ անօգնական վիճակում գտնվողին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես ~~նպատ~~նպատակ այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը: Շահագործում են համարվում այլ անձի~~՝~~ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ~~ձևերը~~ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայություն մատուցելուն կամ հակահիրավական գործողություններ կատարելուն հարկադրելը, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, բջիջը, օրգանը, հյուսվածքը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելը.»,

2) 1-ին կետից հետո լրացնել ~~հետևյալ~~հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին կետ՝

«1.1) **անօգնական վիճակում գտնվող**՝ անձ, որն իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը.»,

3) 5-րդ կետում «հոգեկան խանգարման ~~հետևանքով~~հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձ» բառերը փոխարինել «անօգնական վիճակում գտնվող» բառերով:

Հոդված ~~3~~4. Օրենքի 7-րդ հոդվածում՝

3) ~~1)~~ վերնագրում «**սահմանափակումը**» բառից հետո լրացնել «~~եւ~~**և լրագրողական ~~մրցանակաբաշխության~~մրցանակաբաշխություն հայտարարումը**» բառերը,

4) ~~2)~~ լրացնել ~~հետևյալ~~հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ մաս՝

«2. Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի ~~եւ~~և շահագործման դեմ պայքարն արդյունավետ լուսաբանելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը յուրաքանչյուր տարի ~~հայտարարվում~~հայտարարում է լրագրողական մրցանակաբաշխություն: Ամենամյա լրագրողական մրցանակաբաշխության անցկացման կանոնակարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի ~~եւ~~և սպորտի ~~եւ~~նախարարի ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի ~~եւ~~և սոցիալական հարցերի ~~նախարարների~~նախարարի համատեղ հրամանով:»:

Հոդված ~~4~~5. Օրենքի 11-րդ հոդվածում լրացնել ~~հետևյալ~~հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մաս.

«5. Նույնացման հանձնաժողովի կողմից անձին որպես զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ նույնացնելու ցուցիչները հաստատվում են Հայաստանի Հանրապետության ~~Կառավարության~~կառավարության որոշմամբ:»:

Հոդված ~~5.~~ 6. Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում «հոգեկան խանգարման առկայության» բառերը փոխարինել «անօգնական վիճակում գտնվելու» բառերով:

Հոդված ~~*6.*~~ 7. Օրենքի 22-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հետո լրացնել ~~հետեւյալ~~հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-~~ին եւ~~ 2.~~2~~3-րդ մասեր.

«2.1. Սույն օրենքով նախատեսված աջակցության տրամադրման կարգը ~~եւ~~և չափերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

2.2.~~2.~~ Զոհերին ~~եւ~~և հատուկ կատեգորիայի զոհերին կացարանի տրամադրման, բնաիրային, հոգեբանական, խորհրդատվական, իրավաբանական օգնության ~~եւ~~և խնամքի տրամադրման, այդ թվում՝ համապատասխան հաստատությունում, որակի նվազագույն չափորոշիչները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Սույն մասում նշված ծառայությունների որակի նվազագույն չափորոշիչները պարտադիր են զոհերին կամ հատուկ կատեգորիայի զոհերին սոցիալական ծառայություններ մատուցող հիմնարկների ~~եւ~~և կազմակերպությունների համար՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ~~ձեւից:»:~~ձևից:

2.3. Սույն հոդվածի 2.1-ին և 2.2-րդ մասերում նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանվող կարգավորումները վերաբերելի և կիրառելի են նաև սույն օրենքի 21-րդ հոդվածում նախատեսված՝ նախանույնացման փուլում աջակցության կարիք ունեցող անձանց նկատմամբ:»,

2) 10-րդ մասի առաջին նախադասությունում «ծեր կամ հաշմանդամ» բառերը փոխարինել «տարեց կամ հաշմանդամություն ունեցող» բառերով, իսկ երրորդ նախադասությունում «ծեր, հաշմանդամ» բառերը փոխարինել «տարեց, հաշմանդամություն ունեցող» բառերով:

Հոդված ~~7~~8. Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասում «Հոգեկան խանգարման ~~հետեւանքով~~հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված» բառերը փոխարինել «Անօգնական վիճակում գտնվող» բառերով:

Հոդված ~~*8. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ*~~9.

~~1.~~ Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը~~:~~

3. ~~2. Սույն~~, բացառությամբ սույն օրենքի ~~2~~3-րդ, ~~5~~6-րդ ~~եւ 7~~և 8-րդ ~~հոդվածներով նախատեսված փոփոխություններն ու լրացումներն~~հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2022 թվականի հուլիսի 1-~~ին~~ից:

4. ~~3.~~ Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, իսկ Հայաստանի Հանրապետությունում 2023-2025 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի ~~եւ~~և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը՝ ~~մինչեւ~~ և ծրագրի իրականացման ժամանակացույցը, ֆինանսավորման աղբյուրները ու չափերը, ակնկալվող չափելի արդյունքները՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-158-07.02.2022,21.03.2022-ԱԱ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագիծը առաջարկում ենք լրացնել նոր 1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «**Հոդված 1.** «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-212-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասից, 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից, 9-րդ հոդվածի 2-րդ մասից, 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերից, 12-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերից, 13-րդ հոդվածի 2-րդ մասից, 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերից հանել «կառավարման» բառերը:» Ըստ այդմ վերանայել հոդվածների համարակալումը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 3-րդ՝ 1) մասում՝ «դրան իրականացման ժամանակացույցերի, դրանց իրականացման ժամանակացույցերի, ֆինանսավորման աղբյուրների ու չափերի, ակընկալվող արդյունքների սահմանմամբ» բառերը փոխարինել «և դրանց իրականացման	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ժամանակացույցեր» բառերով: 2) մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «**Եռամյա** ազգային ծրագրերը և դրանց իրականացման ժամանակացույցերն առնվազն ներառում են միջոցառումը, դրա կատարողին կամ կատարողին և համակատարողներին, կատարման ժամկետը, ֆինանսավորման աղբյուրներն ու չափերը, ակնկալվող չափելի արդյունքները:»:		
3.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածի՝ 1) 1-ին կետի «մրցանակաբաշխության» բառը փոխարինել «մրցանակաբաշխություն» բառով: 2) 2-րդ կետով լրացվող 2-րդ մասում «նպատակով՝» բառից հետո» լրացնել «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը» բառերը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 6-րդ հոդված**	Նախագծի 6-րդ հոդվածում՝ 1) «՝2-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 2.1-ին եւ 2.2-րդ մասեր.» բառերը փոխարինել «1) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-2.3-րդ մասեր.» բառերով: 2) լրացնել նոր 2.3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «2.3. Սույն հոդվածի 2.1-ին և 2.2-րդ մասերում նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանվող կարգավորումները վերաբերելի և կիրառելի են նաև սույն օրենքի 21-	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			րդ հոդվածում նախատեսված՝ նախանույնացման փուլում աջակցության կարիք ունեցող անձանց նկատմամբ:»		
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածում լրացնել նոր 2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «2) 10-րդ մասի առաջին նախադասությունում «ծեր կամ հաշմանդամ» բառերը փոխարինել «տարեց կամ հաշմանդամություն ունեցող» բառերով, իսկ երրորդ նախադասությունում «ծեր, հաշմանդամ» բառերը փոխարինել «տարեց, հաշմանդամություն ունեցող» բառերով:»	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածի՝ 1) վերնագիրը հանել, 2) 1-ին և 2-րդ մասերը միավորել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ, 6-րդ և 8-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից:» 3) 3-րդ մասում (2-րդ մաս) «ծրագիրը» բառից հետո լրացնել «և ծրագրի իրականացման ժամանակացույցը, ֆինանսավորման աղբյուրները ու չափերը, ակնկալվող չափելի արդյունքները՝ մինչև» բառերով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է: